




ԿՐՕՆԵԿԸՆ, ՊԵՏՄԵԿԸՆ, ԲԵՆԵՍԻՐԵԿԸՆ, ԵՒ ԲԵՐԱՅԵԿԸՆ.

ԹԻՒ Թ. — ՇԼՋԱՆ Ե.

1872

ՏԱՐԻ Ե. — ՍԵՊՏԵՄԲԵՐ 30

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ԼՍՏԻՆԵՆԸ.

(ՇԽԱՆԻՆԻՆԻ.)

Ս. Լ. ՄԱՅՈՒՆՆԵՐ:

Կուսանաց անապատի արևելակողմն կէս վերստ հեռաւորութեամբ շինուած է այս մենաստանն կոիածոյ քարամբք, հոյակապ, և վայելչակերտ, միջակ դրութեամբ, լայնութիւնն ի ներքուստ ինն քայլ, և երկայնութիւնն տասն և վեց. ունի փոքրիկ աղիւսակերտ կաթուղիկէ, որ սաղաշէն ասանօքն միասին հաստատուած է երկու կամարակապ սեանց վերայ. ունի սեղան մի և երկու խորան, (աջակողմեանի վերայ վերնատուն) առաջեւ տաճարին է գտնիթ վայելուչ չորս սեանց վերայ հաստատուած, որոյ ներքին կողմն զեղեցիկ նկարներով և երանդ-

ներով զարդարած է եղած, այժմ նշմարելի մնացորդքն կմնան. կաթուղիկէի արտաքին շքապատի վերայ կայ դրուած «Հնորհօք ամենագօրին Լստուծոյ շինեցաւ կաթուղիկէ Եկեղեցւոյս աշխատութեամբ Գրիգոր Ա շարգապետին տօրք և ողորմութեամբ Շ օրութեւ ժողովրդեան բնն օգնականութեամբ մահապի Յովսէփի որդի Կապարէթին և կողակից Մարիամին ի թագաւորութեան Շահ-Սեան Էիսէյնի ի հայրապետութեան Տեառն Եղեքսանդրի և յառաջորդութեան սուրբ Կարապետին Աիմէօն Ա շարգապետին և գեօղես Մէլեք Փարսադանին և վանից միաբանիս Տէր Մարկոս Տէր Միքայէլ և Տէր Յովսէփ (Թվ. ՌՄՕԷ)» Շքապատ մենաստանիս ձգուած է քարաշէն պարիսպ ամուր, ի տեղիս տեղիս քայքայեալ գաւթի առաջն արեւմտակողմնն եղած են երկու փոքրիկ բայց գեղեցիկ սենեակներ, այժմ կիսաւեր. հիւսի-

սակողմն գաւթի պարսպին մէջ կայ պահարանակերպ խորշ մի, ուր կան քանի մի խաչքարինք և ունին յիշատակագրութիւններ, բայց դժուարին եղև կարդալն միմիայն քար մի հանուած է աստի և կրգանուի եկեղեցւոյ մէջ, որոյ վերայ կարգացի «Մուլք վանիցն ծախալվար», գաւթի մէջն, ինչպէս ասացի կան երկու եպիսկոպոսաց շիրիմներ, միայն աղիւսների դարսուելուն պատճառաւ չտեսի: Տաճարի հարաւակողմն է աղբիւրն վանից որ ունի աւազան կոիածոյ քարերով, և այժմ ցամաք է ու աւեր. աստի հանած են մարմարեայ քար մի, որոյ վերայ գրուած է «Արդի թուականիս ՌՃԺԿ, մէք Շօնօթեցի Փշրկանց Խօճա Սահակս և Օւաքարեայս բերաք աղբիւր ի գեօղս յիշտակ մեզ և ծնողացն Մհրատի Մարգարին և Նազուլ-Խանին և կողակցացն մերոց Մարեամանցն և մեր որդւոցն Թուամասին ի ժամանակս Հայրապետութեան Տեառն Յակոբայ և Թադաւորութեան փոքր Շահաբասին. յիշողքդ յիշեալ լիջիք», մի և նոյն գրուած էր պարսկերէն լիզուաւ Հայերենէն վեր. արտաքոյ պարսպին արեւմտակողմն և հարաւակողմն ազգի ազգի շինուածոց կիսակործան մնացորդներն կան. իսկ հիւսիսակողմն պարսպին կից՝ է կրապատ քարաշէն ջրամբար մի, ուր տեղ ջրերը ժողովելով գործ դրած են վանուց ջրաղացը շարժելու համար. այս ջրամբարէն փոքր ինչ հեռի է գերեզմանատունն, ուր կան երեք փառաւոր շիրիմք. առաջեւ մենաստանին կանկանի առու ձորակաձև, ուստի կվազեն սովորաբար հեղեղացած անձրևաջրերը: Տաճարի դիմացը կանգնող

ու մտիկ տուող աչքին կներկայանայ ամէն կողմէն չքնաղ և զուարճալի տեսարան. Յայտնի չէ թէ երբ ամայացած է այս մենաստանն, միայն ցաւալի է որ դեռ նոյն վիճակի մէջ է, կալուածոց շատերը թէ և անաէրութեան պատճառաւ ընկած է թուրքերի ձեռք, բայց գործունեայ ձեռքով շուտով կհաւաքուին, ըստ որում օտարանալը շատ ժամանակ չէ:

Ս. Ստեփաննոս

Շօնութէն հինգ վերստ հեռաւորութեամբ դէպ ի հարաւ լեռան մի գլխին շինուած է այս մատուռն յանուն Ս. Ստեփաննոսի, շէնքն հասարակ քարով և հողով. իսկ տանիքն թրծած աղիւսով թաղ տուած. ունի և սեղան մի փոքրիկ. բեմի առաջին կանգնած նրբաքանդակ խաչքար մի կայ, եզերքն արձանագրուած «սուրբ խաչս կանգնեցաւ՝ հոգւոյ փրկութեան Ախթիարիս. Սաւլանի Նիկահ հարիաւ Ուս», խաչի պատուանդանին «Աստուածատուրի Անահորին Սիրամարզին Մելքիայեթին Տատում Ղադամին Գուլումին ի թվիս ՅԷԼ», Մատրան առաջին գաւթի ձեռով երկ յարկ երկու սենեակ կային քարաշէն, կիսաւեր:

Ս. Եղի՝ Մարգարէ

Գիւղի հարաւակողմն, բլրակի մի վերայ կայ աւերակ փոքրիկ մատրան յանուն Եղիա Մարգարէի:

Աղբիւր Գեղի

Գիւղին մէջ երեք տեղ խողովակներով բերուած է ջուր. երկուքն այժմ ոչնչացած հազիւ նշաններն թողած են.

խակ մինն, որ «սուրբ նշանի», մօտն է հա-
րաւակողմն, կոփածոյ վէմ քարերով և
գեղեցկաշէն աղբիւր մի է, բայց այժմ
խցեալ ունի երկու մեծ աւազան: արեւմ-
տակողման աւազանի մէջ մարմարեայ մեծ
քարի վերայ Պարսկերէն և Հայերէն գը-
րովք վերտողած է միւսնոյն արձանագիրն
ինչ որ Ս. Առսաւորիչ վանքի աղբիւրի
քարին վերայ «Արդի Թուականիս ՌՆ՝
ԺՎ. Լէն:

Լէճ Շօռուխայ.

Պիւղի հիւսիսակողմն վերստ ու կէս
հեռաւորութեամբ մեծ և ընդարձակ լիճ
մի եղած է, որ բնակիչներն սովորաբար
կանուանեն «Վըրխ—այաղը», (քառաս-
նոտնեան) այս լիճն հեղեղների և անձ-
րեալըոց բերած հողովն և խճովն այժմ
միանգամայն լցուած հաւասարուած է
թմբերին, բայց դեռ մինչև ցայսօր ամ-
բողջ կանգնած կայ սրբատաշ քարուկիր
շինութեամբ հարաւային որմն լճին. ջը-
րանցքն այնքան լայն շինուած է, որ մարդ
մի կարող է քիչ մի կորացած մտնել ներս:
Ընողք լճիս դարձեալ փշրկանց բազ-
մամարդ ցեղի շառաւիղքն են, հարա-
զատքն Սահակ, և Օւքար, վերոյի-
շատակեալ աղբիւրների բերողները, որոց
և յիշատակն մարմարեայ քարի վերայ
գրուած՝ կայ ազուցած նոյն հարաւային
որմոյն մէջ:

Պիւղի զմանապառն Շօռուխայ.

Ընդարձակ գերեզմանատուն մի է, շքեղ
և բազմաթիւ մահարձանօքն այցելուի
զարմանքն շարժողն. ուր կան բաւական
հին շիրիմներ, բայց ամենէն աւելի աչքի
զարկողներն և նշանաւորներն Փշրկանց

մեծանուն ցեղի գերդաստանաց գերեզ-
մաններն են. որոց միայն չորսը գրի առ-
նուել հարկ համարեցինք. և սրբա են.

«Այս է տապան Ղազարի որդի Ղի-
ւան բէկի աղա Սուրատին որ փոխեցաւ
առ քրիստոս արքայն Թվին հայոց ՌՆ՝Բ»,

«Այս է տապան Փշրուկ հազարապե-
տի աղա Սուրատին որ փոխեցաւ առ
քրիստոս արքայն հայոց ՌՆ՝Բ»,

«Այս է տապան Փշրուկի որդի Խօջայ
Սահակին, որ փոխեցաւ առ քրիստոս
արքայն Թվին հայոց ՌՆ՝Բ ին»,

«Այս է տապան Սարուսի որդի աւա-
գերէց տէր Օհանին որ փոխեցաւ առ քր-
իստոս ի Թվին հայոց ՌՆ՝Գ ին»,

Պերեզմանատան չորս կողմը պատած
է եղեր պարիսպ քարաշէն, որ այժմ Թո-
ղած է միայն հիմունքը. գերեզմանատան
հարաւակողմն, սորա և զիւղի մէջն է
«բազարի մէյտան», ասացեալ տեղին,
ուր ձգուած են եղել բազմամարդ աւա-
նիս վաճառաշահ կրպակները. այս հրա-
պարակի մէջ կանգնած կայ խաչքար մի
որոյ եզերքն տողեալ «սուրբ խաչս կանգ-
նեցաւ հոգոյ փրկութեան Ղարտին»,
և խաչի քառաթևի վերայ «Թվ—իս
Ռ—ԺԼ»,

Պիւղի արեւմտակողմն՝ ձորակի վերայ
ձգուած կան երեք քարաշէն ամուր կա-
մուրջներ, երեքն ևս կիսաւեր:

Փորագաշա.

Ըռութի արեւմտակողմն դարաւանդի
մի վերայ ձգուած գիւղ է այս, այժմ բը-
նակութիւն քառասնաչափ աղքատ հայ
գերդաստանաց: Անունս «Փորագաշա»,
ըստ ոմանց է «Փարագաշա», և յառաջ

եկած իբր թէ փարայ և դաշտ բառերէն. ըստ որում զիւղին մօտ դաշտի մի մէջ կգտնուին փարայի այն է զբամի ձև ունեցող շատ քարեր: Այս տեղ մեռաւ զեղակուր, Մաղաքիա վարդապետ Վրիմեցի: Հ. Միքայէլ Չամչեան սխալմամբ այս զիւղն կկարծէ լինել ի Գուգարս, այնքան գոնէ ուշ չգարձներով, որ իւր պատճառ անցքերը Երնջակի մէջն են պատահած և ոչ ի Գուգարս:

Ս. Գեղի եկեղեցի.

Փոքրիկ, հասարակ քարերով շինուած. փայտածածք անշուք եկեղեցի մի է, զիւղի մէջ տեղն:

Ս. Եղեա.

Յանուն Մարգարէին փոքրիկ մատուռ մի, զիւղի արեւմտակողմն բարձրացած լեռնակի զլեխն, այժմ աւերակ. հին փորագոյշող այժմու զիւղէն կէս վերստ հեռաւորութեամբ կանկանի հիւսիսակողմն, զառ ի վայր լեռնոտի վերայ. պահելով մինչև այսօր իւր կիսակործան աւերակներն քարաշէն, որոյ մէջն է և կիսաւեր եկեղեցի մի քարուղիր և կամարակապ շինութեամբ, որոյ համար բնակչաց աւանդութիւնն կասէ «Յրանկը եկեղեցի», և հարցրած ժամանակս պատմեցին թէ «պապենեկան լսած ենք, որ զիւղի կէսն Յրանկացած ժամանակը էս եկեղեցին շինել են իրանց համար, ցոյց կտային մեզ ի հեռուստ նաև ձորակի մի մէջ գտնուած գերեզմանատուն մի ընդարձակ, հանգեպ յիշատակեալ եկեղեցւոյս, և կտսէին թէ «կէսն Յրանկի ա կէսն հայի», թէպէտ ցանկալի էր ձորը իջնել և կարգաւ արձանագրերը շերմաց, բայց իզանակի վա-

տութեանը պատճառաւ չկարելով, ուրիշ հնարք անձին խողարկութեանն կթողում:

Այդ կիսաւեր եկեղեցւոյ աւերակաց մէջ ուշի ուշով հետադօտ լինելով, միայն մէկ խաչքար գտի կիսամաշ, որոյ վերայ այս քանս երեւեցաւ թ. Ռ. Հ. Օ. սուրբ խաչս յիշատակէ (հ) Արուսիկ Վաղարին,

Վ. ան. Ս. Ստեփաննոսի.

Գիւղէն չորս վերստ հեռաւորութեամբ գէպի հիւսիսակողմն, ձորակի մի ձախակողմն բարձրաւանդակի վերայ շինուած է այս մենաստան յանուն Ս. Ստեփաննոսի. Տաճարն հասարակ քարամբք փոքրիկ անշուք և փայտածածք շինութիւն է. ունի սեղան մի և դուռն մի. չորս կողմն ձգուած է պարիսպ քարաշէն, բարձր և ամուր. արեւմտակողմն պարսպի տակ ձգւած էր խաչքար մի, որ ունէր այս հետադայ խօսքերը «ի հայրապետութեան Եղեազարու և մեր Եպիսկոպոս Մարկոս Վարդապետին Ես Մուղղուսի Գանիկոս ձեռամբ խմով շինեցի զայս պարիսպս և զայս յիշատակին և իմ ծնողացն զհայրն իմ Սահակ և զմայրն իմ Խուսիկարն և վանից միաբանքն ամենեցուն բերան մի ողորմի ասէ ի թվ Ռ. Շ. Լ. Ին», վանքի պարսպին տակ փոքր ինչ ցած կայ աղբիւր մի բարեհամ «նահատակի աղբւր», ասացեալ. այս տեղ են և երկու գերեզմանք, գուցէ մինը Մաղաքիա Վրիմեցւոյն լինի և միւսն Յովհան Որոտնեցւոյն, որ ըստ ցուցանելոյ պատմութեանն թաղեցաւ առաջնոյն մօտ: Երեսնի բնակչաց աւանդութիւն այս միմաստանիս համար կասէ որ շատ հին է, և այս տեղ կնստէր

վիճակի առաջնորդը, երբ որ (կասեն) Պրանկուլթիւնն Քոնա յառաջ եկաւ, Յովհան Արտանեցին այս տեղէն գնաց Եպրակունիս, և սուրբ Սարգիսի վանքը շինելով կանգնեց նրանց հակառակ:

Եյս մենաստանն ունի յիսուն խալվարչաւի գետին, սեպհականութիւն. բայց անհոգ և անխնամ մնալով թուրք բէկի ձեռքն է ընկած դաղտարար: Հինգ տարի յառաջ սուրբ Լջմիածնի Սիւնհոդոսի հրամանաւ և թոյլտուութեամբ վանուցըս սեպհականութիւն համարուած լեւրան մի միջէն մերձաւոր տեղեաց բնակիչներէն երկուքը սկսան պեղել ու պղինձ հանել, բայց առ հարկի աղքատութեանն անկարող գտնուեցան շարունակելու:

Գէաղ.

Եւանգաղոյ արևելեան հիւսիսակողմն սեպացեալ լեւրան ստորոտին շինուած է այն զիւղը. բնակութիւն քսան տուն բրնիկ և գաղթական հայ ժողովրդականաց. որոնք կպարսպին երկրագործութեամբ, այգեգործութեամբ, տաւարատածութեամբ, և մեղուարուծութեամբ: Բայց մօրի տուած գիւղիս փառաւոր և վայելչակերտ եկեղեցւոյն, կիսաւեր բերդին, զիւղը շրջապատող պարսպին և զէպի արևելք ու արևմուտք սփռած տարածուած շինութեանց աւերակներին. հարկաւ պէտք է մակաբերել սորա երբեմնին մեծութիւն, բազմամարդութիւնն և ճոխութիւնն: Բնիկ բնակիչք տեղոյս պատմեցին որ «մենք մեր սրապերից լսած ենք՝ որ էս զիւղումն եօթ հարիւր տուն աւելած. և բոլորն էլ սովորաբար մարդիկ նրանց սովդէն էլել ա Բստամբօլի ու մեծ

մեծ տեղերի հետ. երբոր Աագիր Շահի ժամանակը թալան տալը ետիր տանելը խստուեց թողացին գնացին ուրիշ գհով. ամա շատը Իզմիր գնաց, ու ընտեղ էլ մնացին»:

Օգ և ջուր տեղոյս չափ առողջարար է. բնութեան տեսարանը քաղցրախորժ և զուարճալի:

Ենունս «Գեաղ», կամ «Գաղ», տեղական բնակչաց ասելովն յառաջ է եկած իբր թէ Ս. Հռիփսիմեանց մասանց և այս տեղ բերուելովն ու գաղուելովն:

Ս. Գեղի եկեղեցի.

Մեծագիր, հոյակապ և փառաւոր եկեղեցի. անջնջելի վկայ տեղոյս նախնի բնակչաց փարթամութեանն և բարեպաշտութեանն. սաղաչէն տանիքն և կիսաւեր կաթուղիկէն հաստատուած են չորրս մեծամեծ ամբակուռ սեանց վերայ*) շինութիւն տաճարին համակ ներքուստ և արտաքուստ կոփածոյ քարամբք. միայն տանեաց ներքին երեսն թրժաց աղիւսով ունի սեղան մի մեծ, և խորան երկու. ունի և տանեաց մեջ դժուարամուտ պահարաններ և դարաններ, ուր մանել հրնաք է միայն տաճարի հիւսիսակողմն և նորան կից շինուած սենեկաց միջովն բայց անծանօթ մարդ ամենեկին չէ կարող առանց թելի կամ առաջնորդի այդ բազմապտոյտ արուեստահար անցքէն դուրս դալ: Ունի այս եկեղեցի դուռն մի արեւմտեան, որոյ ճակատին դրուած խաչքարի

(*) Ինչպէս կաթուղիկէն նոյնպէս և տաճարի հարաւային որմն վնասուած են 1841 թուականի երկրաշարժէն:

վերայ դրուած է «Այս քարս յիշատակ է Մհրսի Սայիրին, կողակցին, թոռան, դստեր Աւդալի և Մարիամայ թվ. ՌՆԴՆ», Գրան աջակողմն գեղաքանդակ փոքրիկ խաչքարին վերայ դրուած է «սուրբ խաչքս յիշատակ է հոգւոյ փրկութեան Օհհրապին և կողակցին Գիւլխաթունին ամէն. թ. ՌՆՈ», դրան ձախակողմն զըտնուած փոքրիկ խաչքարի վերայ «սուրբ խաչս կալ օգնական հոգւոյ փրկութեան տէր Բարդուղիմէոսի որդի Կերսէսի թվ. Ռ», ստորե քան այս խաչ, է միւս ևս փոքրիկ՝ նուրբ փորագրուած խաչքար մի, որոյ վերայ վերտողած էր «սուրբ խաչս յիշատակ է Փախլաթին, Տաղմիշին. խաչնուէկէ Մկրտչին բէկ թ. ՌԿ», Առաջեաւ Տաճարիս եղած է գաւիթ փռուաւոր, վայելչաձև, աղիւսակիրտ տանեօք, որոյ երկու քարաշէն աներն կմնան միայն. հարաւակողմն և հիւսիսակողմն են կիսաւեր սենեակները, ուր բնակուել են ինչպէս կերեւի կրօնաւորներ. հարաւակողմն եղածներն թրծաց աղիւսով են շինուած թաղակապ:

Ս. Յովհաննէս.

Գիւղի արեւմտակողմն ճանապարհի վերայ փոքրիկ մատուռ մի քարաշէն, ամբողջ և անփնաս:

Նախապատ.

Ս. Յովհաննէսի արեւմտակողմն Խանդաղւոյ տակ շինուած է այս եկեղեցի փոքրիկ, հողաշէն և փայտածածք. դժուար է որոշել թէ ինչու համար «նահատակ», անունս առած է այս եկեղեցի, որոյ ուխտաւորներն միշտ անպակաս են. եկեղեց-

ւոյ տակէն կբղէ աղբիւր մի յորդ. որոյ ջուրն փոքր մի գաղձ լինելով, ընդունուած է այս կողմերի բնակչաց մէջ հանքային առողջարար ջրոյ տեղ:

Անապատ.

Նահատակի արեւմտակողմն Խանդաղւոյ ստորոտին փոքրիկ բլրակի մի վերայ կան նշմարելի մնացորդք հիման փոքրիկ մատրան, և մէջտեղն կիսամաշ խաչքար մի. բնակիչք այս մատուռն «անապատ», կանուանեն. և գուցէ ժամանակին, անապատասէր անձին ձգնարանն եղած է. սորա մօտն է քարեհամ աղբիւր մի, ուռնեօք զարդարուած որոյ ջուրն ժամանակաւ խողովակներով տարուած է գիւղ. երկիւղալի ժամանակներն, բնակչաց գիւղիս՝ Խանդաղւոյ գլխին ամրացած միջոցը, այս աղբիւրներն եղած է նոցա պասուքը զովացնողն. այսպիսի աղբիւր մի ևս, որ սորա հիւսիսակողմն է, դարձեալ խողովակներով տարուած է գիւղն.

Ս. Լիւիս.

Գիւղի հիւսիսակողմն երկայնած բարձր լերան գլխին կայ փոքրիկ մատուռ մի կիսաւեր, յանուն Լիւիայ Մարգարէին:

Էն Լանտաբէղ.

Գիւղի արեւմտեան հարաւակողմն, այգևատանեայց մէջ ընկած աւերակն կմնայ միայն եկեղեցւոյս, որ «վաճք», կանուանեն սովորաբար բնակիչքն:

Բերդ Գեղիս.

Գիւղի բնակութեանց առաջովն, գեպի արեւելակողմն բարձրացած դժուարամատչելի լեռնակի գլխին քարաշէն ամուր պա-

րիսպներով շրջապատուած անպատանա-
րանն է հին բնակչաց որք և երբեմն ցոյց
տուած են ինչպէս ծերունիքն կպատմեն,
իւրեանց կորովաբազուկ անվհեր քա-
ջութիւններն Պարսից յարձակմանց և
ասպատակութեանց զէմ, այժմ շրջա-
պատ պարիսպն կիսաւեր է: Իւերդիս ա-
րեմտեան ծայրին փոքրիկ մատուռ մի կայ
միանգամայն այժմ աւեր. իսկ հիւսիսա-
կողմն, բերդէն քիչ մի անջատ, է դար-
ձեալ միւս ևս մատուռ փոքրիկ զոր բը-
նակիչքը կանուանեն «սուրբ Սարգիս»,
ուր կան քանի մի խաչքարինք առանց
արձանագրոց:

Ջուր գեղն.

Տեղւոյս այգիները ոռոգող և տնային
զանազան պիտոյից համար գործածուած
ջրերը աղբիւրներ են, հին ժամանակին
բազմաթիւ ձեռնհաս խօջանների հոգացո-
ղութեամբ խողովակներով հեռու տեղե-
րէն բերուած ինչպէս և մէկ երկուքի հա-
մար յիշեցի. այժմ երեք ջրամբարներ
կան. մինն «նահատակի», աղբիւրի ջրոյ
առաջն, ուստի և այգիքն և պարտէզնե-
րն կօռոգուին.*) մինն գիւղի մէջ տեղ,
ուստի խմելու և այլ պիտոյից ջուրը գործ
կածեն. և միւսն գիւղի արեւելակողմն
բաւական հեռի, որ յանուն շինողն կը-
կոչուի «Առաքելի գեօլ»:

Այգեգործութիւնն կատարելապէս
ծաղկած է նոցա մէջ ուստի և ամէն տա-

(*) Այս ջուրն հնումն աւելի մեծ և ընդար-
ձակ ջրամբարի մեջ ժողոված ունենալով, գործ
են դրած ջրաղաց մի բանեցնելու համար. այժմ
կան միայն սրբատաշ քարերով շինուած ջրամ-
բարի և ջրաղացի աւեր մնացորդներն:

րի այգիք առատ արգասաւորութեամբ
կվարձատրեն ժիր երկրագործի քրտինքը:
Առհասարակ քաջ և զինավարժ են գիւ-
ղիս բնակիչներն և մինչև այժմ ոչ մէկը
ֆուստուած չէ գողի ձեռքէ, վասն զի ամէն
շրջակայ բնակչաց մէջ ակնածելի են և
հռչակուած հին ժամանակէ ի վեր մինչև
այսօր:

(Մ. Զեքեան է Երուսաղէմ)

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԸԻՐԵԿԵՅ:

(Է. Բեռն. Զեքեան)

Երեւոյն Ըրաւ:

Այսպէս անուանեցաք զայս մասն. ոչ
զի յարեմուտս կայ մասանցդ բաց յա-
րեւելտն Ըրաւին բաժնէ ամայի տե-
ղեացն, այլ զի ի հարաւ գնացեալ յԱնոյ
և ի Մաղղբերդէ չորից ժամուց ճանա-
պարհաւ յանկեան անդր երկուց գետոց
ընթացից դադարէ. և այլ զի երկայնի
յարեմուտս իբրև վեց ժամուց ճանապարհ
մինչև ցկատարած սահմանացն Բուիկու,
և հասանէ յայնկոյս Սաղղուանու գիւ-
ղորայիցն:

Ուստի յերկու ց կողմանց գետովքն պա-
տի, և ի հիւսսոյ իւրով լերամբք հաղոր-
դի ընդ լեռինս Ըրաւին Անոյ և Սա-
րուց, և հասանէ յարեմտից ի գիւղո-
րայսն Սաղղուանու:

Ին ի սմա լեռինք պատուականք, դաշ-
տավայրք ընդարձակք. և ի գիւղորայսն
գետեղերեայս լինին այգիք, և զինի, բամ-
բակ, և բրինձ պատուական, մանաւանդ ի
Հաճի Պայրամ գիւղ: